Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

18.05.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 14.05.2015թ.-ի թիվ 66 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում անցկացվեց 2015թ.-ի գործունեության համապատասխանության *աուդիտ*, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց վարչության պետ՝ Մ.Ներսիսյանը:

Նախնական տվյալներ.

Վարչությունը կազմված է գյուղատնտեսության և բնապահպանության խմբերից: Գյուղատնտեսության խմբում ընդգրկված է 1 գլխավոր մասնագետ: Բնապահպանության խմբում ընդգրկված են վարչության պետի տեղակալն և 1 առաջատար մասնագետ:Վարչությունը ղեկավարում է վարչության պետը: Վարչությունն ունի վարչության կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Վարչության պետն և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում վարչության գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

./ Վարչության կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը ՀՀ Անտառային, ՀՀ Ջրային և ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Ագրարային պետական տեսչությունների>>, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>>, <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>>, <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>>, <<Բնության պահպանության մասին>>, <<Անասնաբուժության մասին>>, <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսանը: ՈՒՆեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված է Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման կարգը: Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում իրականացնում է կառավարության տարածքային քաղաքականությունը գյուղատնտեսության բնագավառում /1.15 կետ/ և բնապահպանության բնագավառում /1.20 կետ/:

Համադրել ենք ՀՀ Անտառային, ՀՀ Ջրային և ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքերի, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Ագրարային պետական տեսչությունների>>, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>>, <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>>, <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>>, <<Բնության պահպանության մասին>>, <<Անասնաբուժության մասին>>, <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառներում մարզպետին վերապահված լիազորությունները վարչության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ :

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ վարչության կանոնադրությամբ և վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչ.պետ՝ Ծ. Ներսիսյան